

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/4

5 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Փարպի» ՋՕԸ 16.04.2015 թ-ի թիվ 5 գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 07.04.2015 թ-ի թիվ 87 որոշման դեմ:

#### **«Փարպի» ՋՕԸ գանգատում բերված փաստարկները.**

10.04.2015 թ-ին փոստային առաքմամբ ստացվել է Աշտարակի ՏՀՏ-ի կողմից ուղարկված հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 87 որոշումը: Որոշման մեջ նշված է, որ 07.04.2015 թ-ի դրությամբ «Փարպի» ՋՕԸ (այսուհետ նաև ընկերություն) չկատարած հարկային պարտավորությունը կազմում է 1153495 դրամ, որից 1171 դրամ տույժ, 1152324 դրամ տուգանք: Նշված պարտավորությունն առաջացել է ընկերության կողմից 2014 թ-ի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով հաշվարկված տուգանքի գումարները և նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերի գումարները օրենքով սահմանված ժամկետներում չվճարելուց:

Դեռևս 20.08.2014, 22.08.2014, 29.08.2014, 11.09.2014, 22.09.2014, 01.10.2014, 23.10.2014թ.թ. ամսաթրվերով թվագրված՝ ՊԵԿ-ին (նաև Աշտարակի ՏՀՏ-ին) ուղղված գրություններում (գրությունների պատճենները, տվյալ ամիսների համար սահմանված ժամկետներում և կանխավճարային կարգով կատարված եկամտային հարկի գումարի վճարման հանձնարարագրերի պատճենները, taxservice.am կայքից արտահանած մի շարք փաստաթղթերի պատճենները, փոստային առաքումների անդորրագրերը և ՊԵԿ-ի հետ կնքած թիվ 1716 պայմանագրի պատճենը կցված են), ընկերությունը ներկայացրել է լուծում պահանջող հետևյալ հարցը.

«Փարպի» ՋՕԸ-ն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է և գործում է 2004 թ-ից: 2014 թ-ի օգոստոսի 20-ից սկսած ընկերությունը չի կարողացել հարկային հաշվետվությունների թիվ 114 և 109 ձևերը ներկայացնել: 20.08.2014 թ-ին դա կապված էր taxservice.am կայքի ոչ նորմալ աշխատանքի հետ, որի մասին գրավոր տեղյակ է պահվել Աշտարակի ՏՀՏ-ին և ստիպված հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը փոստային առաքմամբ ներկայացվել է ՀՏ: Հաջորդ օրը, երբ կայքի աշխատանքները նորմալացան, ընկերությունը չի կարողացել լրացնել 114, դրա հիման վրա նաև 109 ձևերը և էլեկտրոնային փոստով դիմել է «ekenq» ՓԲԸ-ին ներկայացնելով խնդիրը, որին ի պատասխան առաջարկվել է դիմել ՊԵԿ, զանգահարելով 060544444 հեռախոսահամարով: Հետագայում ՊԵԿ (060544444) օպերատորների միջոցով հնարավոր է եղել գտնել 114 ձևի չբացվելու պատճառը, որը կայանում էր նրանում, որ ընկերությունը 01.07.2014 թ-ից հանձնվող եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի համակարգում Աշտարակի ՏՀՏ-ի կողմից գրանցվել է որպես ՀՈԱԿ: Նշվածը պարզելուց հետո 22.08.2014 թ-ին տեղեկացվել է Աշտարակի ՏՀՏ-ին ուղղում կատարելու համար:

Սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կարգի դրույթը հաշվի առնելով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաշվետվությունների

ներկայացման էլեկտրոնային համակարգում ուղղումը չի կատարվել, ընկերությունը 29.08.2014 թ-ին նորից գրությամբ դիմել է Աշտարակի ՏՀՏ փոստային առաքմամբ ներկայացնելով նաև 114 ձևում ընդգրկվող աշխատակիցների տվյալները: Արդեն 2014 թ-ի օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվետվության ներկայացման ժամկետն էր լրանում, սակայն համակարգում փոփոխությունները չէին կատարվել: Ընկերությունը ստիպված 22.09.2014 թ-ին և 01.10.2014 թ-ին դիմել է Ֆինանսների նախարարին՝ ներկայացնելով խնդիրը: Պետք է կատարվեին ծրագրային ուղղումներ՝ կանոնավոր կերպով հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ՊԵԿ ներկայացնելու համար:

Կապվելով ՊԵԿ համապատասխան ծառայության հետ ընկերությունը պարզել է, որ դիմումով զբաղվում են և համակարգում ծրագրային ուղղումները կկատարվեն (հեռ. 060544980): Սակայն ծրագրային ուղղումներն այդպես էլ չէին կատարվում և ընկերությունը նորից 23.10.2014 թ-ին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին հարցին լուծում տալու համար:

Ծրագրային ուղղումը կատարելուց հետո հուլիս-հոկտեմբեր ամիսների հաշվետվությունների անգամ ճշգրտման տարբերակով ներկայացումը ևս հնարավոր չի եղել, քանի որ ծրագրային ուղղումը կատարվել էր թերի և ապահովում էր ուղղման պահից հաշվետվությունների ներկայացում: Այսինքն, նշված փոփոխությունից հետո ընկերությունը կարողացել է 2014 թ-ի նոյեմբեր ամսվա համար եկամտային հարկի հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով հանձնել ՊԵԿ: Սակայն մինչև օրս չի կարգավորվել 2014 թ-ի հուլիս-հոկտեմբեր ամիսների համար 109 ձևի լրացման հետ կապված խնդիրը՝ հաշվի առնելով սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կարգի դրույթները:

ՊԵԿ-ին (նաև Աշտարակի ՏՀՏ-ին) ուղղված դիմումներում ընկերությունը բացի 01.07.2014 թ-ից ներկայացվող եկամտային հարկի ամսական անփոփ հաշվարկի համակարգում ծրագրային ուղղումներ կատարելը, նշել է նաև հետևյալ հանգամանքը.

Հաշվետվությունների 114 և 109 ձևերի էլեկտրոնային եղանակով չեն հանձնվել ոչ թե ընկերության մեղքով, այլ 01.07.2014 թ-ից հետո հանձնվող եկամտային հարկի ամսական անփոփ հաշվարկի համակարգում Աշտարակի ՏՀՏ-ի կողմից ընկերությանը որպես ՀՈԱԿ գրանցելու պատճառով, որն առաջացրել է ծրագրային փոփոխություններ: Նշվել է նաև, որ ընկերության կողմից հաշվարկված եկամտային հարկի բոլոր վճարումները կատարվել են ժամանակին, կատարվել են նաև կանխավճարային մուծումներ:

Ընկերության կողմից 2014 թ-ի հուլիս-հոկտեմբեր ամսվա հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով 06.03.2015 թ-ին հանձնվել են ՊԵԿ, չնայած որ այդ ամսաթվի դրությամբ ևս համակարգում ուղղումներ չէին կատարվել և սոց. վճարների գումարներն ավտոմատ կերպով հաշվարկվում էին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է վերացնել Աշտարակի ՏՀՏ-ի 07.04.2015 թ-ի թիվ 87 որոշումը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով «Փարայի» ՋՕԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 07.04.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.153.495 դրամ, որից 1171 դրամ տույժ, 1.152.324 դրամ տուգանք: Նշված

պարտավորությունն առաջացել է 2014 թ-ի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման հետևանքով: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 07.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 87 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Փարպի» ՋՕԸ-ից 1.153.495 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ «Փարպի» ՋՕԸ-ի կողմից եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել ՀՀ ՖՆ հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում առկա խնդիրներով, ինչպես նաև ընկերության կազմակերպա-իրավական կարգավիճակի վերաբերյալ տվյալները «Հարկատու 2», հետագայում նաև «Հարկատու 3» համակարգեր սխալ մուտքագրվելու հանգամանքով: Այդ խնդիրների վերաբերյալ ընկերությունը բազմիցս բարձրաձայնել է թե Աշտարակի ՏՀՏ, թե ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծին:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտումների առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան խախտումը (արարքը) ընկերության կողմից կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես, սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտ է նախ պարզել «Փարպի» ՋՕԸ-ի վարքագծում մեղքի առկայության փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները՝ Հանձնաժողովը գտնում է, որ եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը, ինչը և հանգեցրել է ընկերության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառմանը, չի կարող միանշանակ որակվել որպես «Փարպի» ՋՕԸ-ի կողմից իրականացված խախտում, քանի որ վերջինս կատարվել է ընկերությունից անկախ հանգամանքների բերումով: Այսինքն, ընկերության վարքագծում, ըստ էության, բացակայում է մեղքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ եկամտային հարկի հաշվարկները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացնելը չի կարող առաջացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 07.04.2015 թ-ի թիվ 87 որոշմամբ գանձման առաջադրված գումարից, ինչպես նաև «Փարպի» ՋՕԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն լրացուցիչ առաջադրված պարտավորությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

